ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-17/48-2»

ք. Երևան «25» 07 2017 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՀԱՆԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքի (Սբ Ամենափրկիչ եկեղեցու) ամրակայման, նորոգման և վերականգնման, ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին համայնքի Որոտնավանքի (գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման, ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու (և գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ՝ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում

թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 817 890 (ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 404 160 (չորս հարյուր չորս հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 90 360 (իննսուն հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝ 323 370 (երեք հարյուր քսաներեք հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները ,կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1

հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«ԱՀԱՆԱ» ՍՊԸ, հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 15շ. բն. 5, հեռ.՝ 271131, 094598998, ՀՎՀՀ՝ 00080002 հ/հ՝ 163058566908, «Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ,
Աշխատակազմի ղեկավար՝ /Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ /Հ. Հովսեփյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1

«25» 07 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԵՁԲ-17/48-2» *ծածկագրով գնման պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին 1

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքի (Սբ Ամենափրկիչ եկեղեցու) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը			չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
		հ/հ	Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	Պարբերականությունը և արդյունքների ձևակերպումը				հասցեն	ժամկետը
1	98111140/1	1	Կապալառու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները նախագծային փաստաթղթերին համապատասխանության, ինչպես նաև օրենսդրության ու իրավական ակտերի պահանջների կատարման ապահովում.	ոչ պակաս, քան ամիսը երեք անգամ՝ հետևություններն ու դիտողությունները գրանցելով վարման մատյանում	դրամ	404 160	1	ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի Սանահինի վանքի Սբ ամենափրկիչ եկեղեցու տարածք	15.11.2017թ.
		2	Աշխատանքները նախագծային լուծումներից շեղումների, բացթողումների ու թերությունների արձանագրում, դրանց վերացման ձևի, ժամկետների և կարգի սահմանում ու կատարման հսկողություն՝	շեղումները և դրանց վերացման արդյունքները գրանցելով վարման մատյանում					

		3	Իրականացվող աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր տվյալների հիման վրա նախագծային անհրաժեշտ փոփոխությունների, նոր կամ լրացուցիչ լրամշակումների կատարում և համաձայնեցում պատվիրատուի հետ (մասնագիտական ակտ).	Ըստ ծագած անհրաժեշտության՝ կատարելով համապատասխան նախագծանախահաշվային փոփոխություններ					
		4	Աշխատանքները իրականացնող կազմակերպության կողմից դրանց փոփերը և դրանք ամբողջությամբ Պատվիրատուին հանձնելու համապատասխան ակտերի և արձանագրությունների ստուգում, կազմում, ստորագրում:	Ըստ Պատվիրատուի և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության միջև կնքված պայմանագրի պահանջների					
		5	Արտահերթ ստուգումների կատարում	Պատվիրատուի պահանջով (ոչ հաճախ, քան ամիսը մեկ անգամ)					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011012979
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՀԱՆԱ» ՍՊԸ,
հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 15շ. բն 5,
հեռ.՝ 271131, 094598998,
ՀՎՀՀ՝ 00080002
հ/հ՝ 163058566908,
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ,

Տնօրեն՝

Հ. Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Չափաբաժին 2

ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին համայնքի Որոտնավանքի (գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը			չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
								հասցեն	ժամկետը
2	98111140/1	**հ/հ**	**Ձեռքբերվող Ծառայության նկարագիր**	**Պարբերականությունը և արդյունքների ձևակերպումը**	դրամ	90 360	1	ՀՀ Սյունիքի մարզի Վաղատնի համայնքի Որոտնավանքի տարածք	15.11.2017թ.
		1	Կապալառու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները նախագծային փաստաթղթերին համապատասխանության, ինչպես նաև օրենսդրության ու իրավական ակտերի պահանջների կատարման ապահովում:	ոչ պակաս, քան ամիսը երեք անգամ՝ հետևություններն ու դիտողությունները գրանցելով վարման մատյանում					
		2	Աշխատանքները նախագծային լուծումներից շեղումների, բացթողումների ու թերությունների արձանագրում, դրանց վերացման ձևի, ժամկետների և կարգի սահմանում ու կատարման հսկողություն:	շեղումները և դրանց վերացման արդյունքները գրանցելով վարման մատյանում					
		3	Իրականացվող աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր տվյալների հիման վրա նախագծային անհրաժեշտ փոփոխությունների, նոր	Ըստ ծագած անհրաժեշտության					

			Կամ լրացուցիչ լրամշակումների կատարում և համաձայնեցում պատվիրատուի հետ (մասնագիտական ակտ).	նախագծանախահաշվային փոփոխություններ					
		4	Աշխատանքները իրականացնող կազմակերպության կողմից դրանց փուլերը և դրանք ամբողջությամբ Պատվիրատուին հանձնելու համապատասխան ակտերի և արձանագրությունների ստուգում, կազմում, ստորագրում.	ըստ Պատվիրատուի և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության միջև կնքված պայմանագրի պահանջների					
		5	Արտահերթ ստուգումների կատարում	Պատվիրատուի պահանջով (ոչ հաճախ. քան ամիսը մեկ անգամ)					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011012995
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գանձապետական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՀԱՆԱ» ՍՊԸ,
հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 15շ. բն. 5,
հեռ.՝ 271131, 094598998,
ՀՎՀՀ՝ 00080002
հ/հ՝ 163058566908,
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ,

Տնօրեն՝

_____ Հ. Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ

«ԱՀԱՆԱ»
«ԱՐԱՀԱ»
«AHANA»
00080002

Չափաբաժին 3

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու (և գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը			չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
								հասցեն	ժամկետը
3	98111140/1	**հ/հ**	**Ձեռքբերվող Ծառայության նկարագիր**	**Պարբերականությունը և արդյունքների ձևակերպումը**	դրամ	323 370	1	ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու տարածք	15.11.2017թ.
		1	Կապալառու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները նախագծային փաստաթղթերին համապատասխանության, ինչպես նաև օրենսդրության ու իրավական ակտերի պահանջների կատարման ապահովում:	ոչ պակաս, քան ամիսը երեք անգամ՝ հետևություններն ու դիտողությունները գրանցելով վարման մատյանում					
		2	Աշխատանքները նախագծային լուծումներից շեղումների, բացթողումների ու թերությունների արձանագրում, դրանց վերացման ձևի, ժամկետների և կարգի սահմանում ու կատարման հսկողություն:	շեղումները և դրանց վերացման արդյունքները գրանցելով վարման մատյանում					
		3	Իրականացվող աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր տվյալների հիման վրա նախագծային անհրաժեշտ փոփոխությունների, նոր	Ըստ ծագած անհրաժեշտության					

			կամ լրացուցիչ լրամշակումների կատարում և համաձայնեցում պատվիրատուի հետ (մասնագիտական ակտ):	նախագծանախահաշվային փոփոխություններ					
		4	Աշխատանքները իրականացնող կազմակերպության կողմից դրանց փուլերը և դրանք ամբողջությամբ Պատվիրատուին հանձնելու համապատասխան ակտերի և արձանագրությունների ստուգում, կազմում, ստորագրում:	ըստ Պատվիրատուի և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության միջև կնքված պայմանագրի պահանջների					
		5	Արտահերթ ստուգումների կատարում	Պատվիրատուի պահանջով (ոչ հաճախ, քան ամիսը մեկ անգամ)					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011013001
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՀԱՆԱ» ՍՊԸ,
հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 15շ. բն. 5,
հեռ.՝ 271131, 094598998,
ՀՎՀՀ՝ 00080002
հ/հ՝ 163058566908,
«ՀայԷկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ,

Տնօրեն՝

Հ. Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ

«ԱՀԱՆԱ»
«ARAHA»
«AHANA»
00080002

Հավելված 2

«15» 07 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-17/48-2» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/1	ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքի (Սբ Ամենափրկիչ եկեղեցու) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	229 563	229 563	229 563	404 160	404 160	404 160	**404 160**
2	98111140/1	ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին համայնքի Որոտնավանքի (գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	12 045	12 045	12 045	90 360	90 360	90 360	**90 360**
3	98111140/1	ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու (և գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ կատարվելիք աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	135 815	135 815	135 815	323 370	323 370	323 370	**323 370**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար

_____ / Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՀԱՆԱ» ՍՊԸ,
հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 15շ. բն. 5, հեռ.՝ 271131, 094598998,
ՀՎՀՀ՝ 00080002
հ/հ՝ 163058566908,
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ,

Տնօրեն

_____ / Հ. Հովսեփյան
(ստորագրություն)

«ԱՀԱՆԱ» ՍՊԸ
«ՀԱՆԱ»
«AHANA»
00080002

Հավելված 3

«25» 07 *2017թ. կնքված*

N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-17/48-2» *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«ԱՀԱՆԱ» ՍՊԸ,
հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 15շ.
բն. 5, հեռ.՝ 271131, 094598998,
ՀՎՀՀ՝ 00080002
հ/հ՝ 163058566908,
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ

Պատվիրատու
ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /Հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1

«25» 07 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-17/48-2» *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ·

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն